Ըստ որոշ պատմական ու գիտական աղբյուրների՝ Ուջան բնակավայրը նախկինում կոչվել է Վժան: Այս անունը գյուղը ստացել է Արագած լեռան գագաթից իջնող և բնակավայրով անցնող վժժան (քչքչան), փրփրադեզ առվակի ձայնից:

«Թվում է, թե «Վժան» է կոչվել գյուղը սարի կատարից **ջրվեժի ձևով իջնող ջրերի համար**: Արդարև, շատ հեռվից նկատելի է վժվժան ջրերի սպիտակ ժապավենը, որ գյուղը կապում է լեռան կատարին՝ ստորոտում ստեղծելով հարուստ բուսականություն»,- Մ. Տեր-Ստեփանյան, «Ուխտագնացություն դեպի Արագածոտն գավառի սրբավայրերը» /Ուղևորական նոթեր/ գրքից, հեղ.՝ «Էջմիածին», 1955, համար 6, էջ 42:

Վժան հնագույն տեղանունը առաջին անգամ հիշատակում է IX-X դարերի հայ մատենագիր Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին. «ի գիւղն **Վժան**, որ ի ստորոտս Արագած լերինն»՝ Ատրպատականի արաբական ամիրա Ափշինի 894-895 -ին Հայաստան կատարած արշավանքի կապակցությամբ[1]: Հայոց թագավոր Սմբատ Ա Բագրատունին, 895-ին հայկական զորքերը կենտրոնացնելով **Վժանում**՝ Դողս գյուղի մոտ պարտության է մատնել Ափշինին:

Վժան տեղանունը հավաստի վկայված է նաև վիմագրերում, որոնց պատմագիտական արժեքը, անփոխարինելիությունը, արժանահավատությունը բնորոշվում է դրանց հետագա աղավաղումներից զերծ լինելու խիստ կարևոր հանգամանքով:

Այսպես, Վժանին վերաբերող ըստ ժամանակի երկրորդ վկայությունը քաղում ենք Հայոց սպարապետ Վահրամ Պահլավունու կողմից Մարմաշենի վանքի Գլխավոր Կաթողիկե եկեղեցու (կառուցված 988-994 թթ.[2]) շինարարական-նվիրատվական արձանագրությունից: Այստեղ կառուցողը թվարկելով իր կողմից եկեղեցուն արված նվիրատվությունները, ի թիվս այլոց հիշատակում է «ի Վժան այգի»[3]: Իսկ ահա գյուղի մոտ հայտնաբերված արձանագրությունում ուղղակիորեն վկայված է, որ գյուղի անվանումը պայմանավորված է լեռներից սրընթաց **հոսող «վժացող» առվակի հետ**[4]:

---

[1] Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, աշխ-մբ Գ. Տէր-Վարդանեանի, «Մատենագիրք Հայոց», հտ. ԺԱ, Անթիլիաս, 2010, էջ 461:

[2] Բալասանյան Հ., Մարմաշենի ճարտարապետական համալիրը և վիմագրերը, «Էջմիածին», 2008, N Զ-Է, էջ 119; Դիվան հայ վիմագրության, պր. X, Եր., 2017, էջ 92:

[3] Բժշկեան Մ., Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, Վենետիկ, 1830, էջ 74; Մխիթարեան Աբ., Պատմութիւն Հոռոմոսին եւ տեղագրութիւն Մարմաշէն եւս այլոց ոմանց վանօրէից ի Շիրակ, Վաղ-պատ, 1870, էջ 9-11; Ալիշան Ղ., Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 148; Орбели И. А, Надписи Мармашена, Петроград, 1914, с. 1 և այլն:

[4] Տեղական տնտեսական զարգացում, Մասնակցային առավելությունների գնահատում (PACA), Աղձք, Ագարակ, Ուջան և Ոսկեվազ համայնքներում, Արագածոտն,

Պատմագիր Առաքել Դավրիժեցին չափազանց մանրակրկտորեն հիշատակում է հայկական բնակավայրեր՝ իրենց հին և XVII դ. անվանումներով: Նա նշում է նաև **Վժան** անվամբ գյուղի մասին՝ կապված Մելքիսեթ Վարդապետ **Վժանեցու** հետ[5]:

Զաքարիա Քանաքեռցին ևս հիշում է **Վժանը՝** կապված XVII դ. սկզբին պարսիկ-ների և օսմանցիների միջև ծավալված պատերազմների մանրամասների հետ[6]:

Վժան անվանումը անխաթար պահպանվել և գործածվել է XVIII դարի 2-րդ կեսին և արձանագրված է Սիմեոն Երևանցու կողմից՝որպես Տեղերի վանքի վիճակներից մեկը[7]: Եվ միայն XIX դ. արդեն «Վժան անվանումն օտար (այն էլ թյուրքական-Վ.Ա.) աղավաղմամբ դարձել է Ուջան»[8] :

Նշենք նաև, որ ՀՀ աշխարհագրական օբյեկտների անվանակոչումների և անվանափոխումների մասնագիտական հանձնաժողովի 2019 թ. օգոստոսի 5-ի N 2019-01 նիստում ներկայիս Ուջան գյուղի Վժան հայեցի անվանումը վերականգնելու հարցն արժանացել է դրական եզրակացության: Այսինքն, որոշակի գործընթացներ կան պաշտոնապես գյուղի ՎԺԱՆ անունը վերականգնելու հետ կապված:

---

[5] Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Ե., 1988, էջ 306, 308, 309:

[6] Զաքարիա Քանաքեռցի, Պատմութիւն: Կոնդակ Սուրբ ուխտին Յոհաննու վանից,Ե., 2015, էջ 72, 73, 85:

[7] Սիմեոն կաթողիկոս Երևանցի, “Ջամբռ”, Ե., 2003, էջ 401-402:

[8] Հայկական սովետական հանրագիտարան, հտ.11, Եր., 1985, էջ 422; Հայկական համառոտ հանրա-գիտարան, հտ. 4, Եր., 2003, էջ 646: